

**ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱԿՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ²⁶**

Գրիգորյան Ա. Կ. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)

anigrigoryanpsy@gmail.com

Ներկայացման ամս.՝ 28.07.2019

գրախոսման ամս.՝ 02.08.2019

տպագրության ընդունման ամս.՝ 13.09.2019

Հոդվածում քննարկվում է հոգեբանական իրավահավակնության բազմաչափ կոնստրուկտը՝ անձնային բնութագրերի և ինքնագնահատականի պայմանավորվածության ներքո: Որպես այդպիսիք՝ դիտարկվել են անձնային գծերը («Մեծ հնգյակ, «Մութ եռյակ») և ինքնագնահատականը (անձնային ինքնագնահատական, միջանձնային/հարաբերվող ինքնագնահատական և խմբային ինքնագնահատական): Վերլուծության արդյունքում պարզվել է, որ անձնային ինքնագնահատականն ամենաշատ կանխորոշող նշանակությունն ունի հոգեբանական իրավահավակնության համար, այնուհետև նարցիսիզմի, մաքիավելիզմի անձնային գծերը, լայնախոհությունն ու նեյրոտիզմը: Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս ընդլայնելու հոգեբանական իրավահավակնության հասկացումն անձնային առանձնահատկությունների տեսանկյունից:

***Հանգուցային բառեր՝** հոգեբանական իրավահավակնություն, անձնային գծեր, ինքնագնահատական, նարցիսիզմ, մաքիավելիզմ, փսիխոպաթիա:*

Վերջին տասնամյակում հոգեբաններն առաջ են քաշում անձնային բնութագրերի ուսումնասիրման մի նոր հասկացություն, ինչպիսին է իրավահավակնությունը [2], ինչը պայմանավորված է անհատի իրավագիտակցության, հանրային կյանքում անձի պատասխանատվության դիսկուրսի ձևավորման հետ: Հոգեբանական իրավահավակնությունն այն բանի «կայուն զգացումն է, որ մարդն իրավունք ունի և արժանի է ավելին, քան ուրիշները» [2, էջ 31]: Քանի որ մարդը ներառված է սոցիալական տարբեր միջավայրերի և փոխհարաբերությունների մեջ, որոնք առաջադրում են գործելու բազմազան հնարավորություններ ու ռեսուրսներ, հետաքրքիր է դառնում ուսումնասիրելը, թե հոգեբանական ինչ առանձնահատկությունների հիման վրա է մարդն իրեն ավելի արժանի համարում սոցիալական ռեսուրսների օգտագործման համար, քան ուրիշներին: Որպես այդպիսին, այս աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվում է անձնային գծերի և ինքնագնահատականի

²⁶ Հետազոտությունն անցկացվել է «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի՝ «Նարցիսիզմ և անձի ինքնագնահատական» թեմայով միջնակութային ուսումնասիրության շրջանակում (նախագծի համակարգողներ՝ Մագդա Ժեմոտել-Պիտրովսկա, Գրանսկի համալսարան, Լեհաստան, և Ջոզեն Գեբաուեր, Մանհեյմի համալսարան, Գերմանիա)

առնչությունը հոգեբանական իրավահավականության՝ ավելիին արժանի լինելու անհատական զգացման հետ:

Անձի հոգեբանության շրջանակում, ընդհանուր առմամբ, առանձնացվում են իրավահավականության կոնցեպտուալացման երկու մոտեցումներ: Կլինիկական տեսանկյունից ֆոկուսավորվում է իրավահավականության պաթոլոգիական բնույթը՝ դիտարկվելով որպես նարցիստիկ անձի բաղկացուցիչ: Այս համատեքստում, իրավահավականությունը հասկացվում է որպես հատուկ վերաբերմունքի շահագործող, չհիմնավորված պահանջ. քանի որ նարցիստիկ անձն իրեն ընկալում է որպես առանձնահատուկ, եզակի կարողություններով օժտված, դրա շնորհիվ էլ ունի զգացում և պահանջ, որ ինքը պետք է արժանանա ավելի լավ վերաբերմունքի, քան ուրիշները:

Մյուս՝ սոցիալ-հոգեբանական մոտեցման շրջանակներում, իրավահավականությունը կապվում է արժանի լինելու զգացման հետ՝ շեշտադրելով միջանձնային հարաբերությունները, արդարության հանդեպ պահանջատիրությունը: Այսպիսի իրավահավականությունը չի սահմանվում որպես պաթոլոգիկ անձնային գիծ, այլ ավելի շուտ՝ վարքային միտում, որը կարող է անցանկալի լինել որոշ կոնտեքստներում՝ սոցիալական հարաբերությունների տեսանկյունից, բայց լինել շահեկան այն դրսևորող անձի համար [10]:

Կարևոր է նշել, որ երկու մոտեցումներում էլ հոգեբանական իրավահավականության հասկացումն ընդհանուր՝ կոնկրետ իրավիճակով չպայմանավորված, միջիրավիճակային զգացում է [8]:

Հոդվածի շրջանակներում հոգեբանական իրավահավականությունը մենք դիտարկում ենք անձի առողջ գործառնության համատեքստում, ընդ որում, մեր կոնցեպտուալ մոտեցումը «հատող է» նկարագրված երկու մոտեցումների միջակայքում: Հոգեբանական իրավահավականության մեր դիտանկյան առանձնահատկությունը կայանում է նրանում, որ մի կողմից ուսումնասիրում ենք անձնային հինգ գծերի, մյուս կողմից՝ անձի «մութ» գծերի պայմանավորող նշանակությունը իրավահավականության համար:

Մեր մոտեցումը փորձ է հոգեբանական իրավահավականության բազմաչափ կոնստրուկտը դիտարկել անձնային ամբողջականության տեսանկյունից. մի կողմից՝ անձի չեզոք-դրական դիսպոզիցիոնալ գծերի (էքստրավերտություն, նեյրոտիզմ, լայնախոհություն, բարեխղճություն և բարյացակամություն) [5], մյուս կողմից՝ բացասական անձնային գծերի (նարցիսիզմ, փսիխոպաթիա և մաքիավելիզմ) [7] հետ հարաբերության մեջ: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ անձի բացասական գծերը, իրավիճակների լայն դիապազոնում արտացոլելով ոչ այնքան կոնվենցիոնալ, որքան հենց անհատի համար օգտակար (շահեկան) վարքի ձևեր (սոցիալական նորմերի խախտում, մանիպուլյացիաների կիրառում օգուտի ձեռքբերման համար) [1], կոնստրուկտի խորքային հասկացման հնարավորություն է ընձեռվում:

Նարցիստիկ անձնային գիծը բնորոշվում է սեփական նշանակալիության գերզգացմամբ, սեփական եզակիության հանդեպ հավատով, անընդհատ ուշադրու-

թյան ու հիացմունքի պահանջմունքով, հատուկ վերաբերմունքի սպասումով: Այս տեսանկյունից՝ նարցիստիկ անձնային գիծը օգտակար կոնցեպտ է հոգեբանական իրավահավակնության հետ առնչության մեջ դիտարկելու համար: Մաքիավելիզմին բնորոշ է հուզական սառնությունը, պրագմատիկությունը, մանիպուլյացիան սոցիալական և միջանձնային հարաբերություններում: Փսիխոպաթիան առանձնանում է անպատասխանատու, հակասոցիալական վարքագծով, անբավարար հուզական փորձառությամբ, իմպուլսիվությամբ [1; 4]: «Մութ եռյակի» այսպիսի բնութագրերը կօգնեն հասկանալու, թե որոնք և ինչ չափով պայմանավորող նշանակություն ունեն հոգեբանական իրավահավակնության համար:

Եվ իհարկե, իրավահավակնության սոցիալ-հոգեբանական ասպեկտի ուսումնասիրության համար հետաքրքրական է ինքնագնահատականի երեք բաղադրիչների՝ անձնային միջանձնային և կոլեկտիվ, պայմանավորող նշանակության ուսումնասիրումը: Անձնային ինքնագնահատականը կապված է այն բանի հետ, թե ինչպես են մարդիկ ընկալում իրենց եզակիությունն ուրիշների հետ համեմատությամբ: Միջանձնային ինքնագնահատականը նշանակալից ուրիշների հետ հարաբերություններում սեփական ես-ի արժեքի ընկալումն է, իսկ կոլեկտիվ ինքնագնահատականը ցույց է տալիս, թե ինչպես են մարդիկ ընկալում իրենց արժեքը սոցիալական խմբում ունեցած դիրքի տեսանկյունից [3]: Հետագա վերլուծությունը կօգնի պարզել, թե ես-ի արժևորման այս երեք չափումներն ինչպես են հարաբերվում «ավելիին արժանի լինելու» անհատական զգացման հետ:

Հետազոտական ընտրանքը կազմել են 266 ուսանող Երևանի տարբեր բուհերից (55.3%-ը կին, $M_{տարիք}=19.26$, $\sigma_{տարիք}=1.346$): Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ հարցարանները.

Հոգեբանական իրավահավակնության չափման սանդղակ (psychological entitlement scale [2]) բաղկացած 9 հարցերից (1-7 միավորի ընտրության տարբերակներով): Հաշվի առնելով՝ մեթոդիկայի կարևորությունը հետազոտության համար, նախքան այլ մեթոդիկաներով ստացված տվյալների հետ համադրումը՝ ստուգել ենք հարցարանի հուսալիությունը α -Կրոնբախի ցուցիչով (0,806): Ստացված արդյունքը թույլ է տալիս եզրակացնել հարցարանի բարձր հուսալիության մասին: Հետաքրքրական է, որ հետազոտական ամբողջ ընտրանքի 67,7%-ի մոտ դրսևորվում է հոգեբանական իրավահավակնության միջին մակարդակ ($M=4,25$; $\sigma=1,258$):

«Մեծ հնգյակը» չափող հարցարան՝ կարճ փարբերակ (Big Five Inventory-Short [5])՝ բաղկացած 15 հարցից (1-7 միավորի ընտրության տարբերակներով), որոնք չափում են անձնային հինգ գծերը. նեյրոտիզմ ($M=4,71$; $\sigma=1,460$), էքստրավերտություն ($M=4,27$; $\sigma=1,327$), լայնախոհություն ($M=5,12$; $\sigma=1,322$), բարեխղճություն ($M=4,85$; $\sigma=1,263$), բարյացակամություն ($M=4,61$; $\sigma=1,21$): Յուրաքանչյուր անձնային գծի համար ներկայացված նկարագրական ցուցանիշներից կարելի է տեսնել, որ հետազոտական ընտրանքում միջինի ցուցանիշով առավել արտահայտված է լայնախոհության (փորձին բացությունը) անձնային գիծը:

«Մութ եռյակի» հարցարանը (Dirty Dozen Dark Triad [7])՝ բաղկացած 12 հարցերից (1-7 միավորի ընտրության տարբերակներով): Նախատեսված է նարցիսիզմի ($M=4,28$; $\sigma=1,601$), փսիխոպաթիայի ($M=2,81$; $\sigma=1,598$) և մաքիավելիզմի ($M=3,31$; $\sigma=1,620$) անձնային գծերի չափման համար:

Ինքնագնահատականի երեք բաղադրիչների չափման համար օգտագործվել են. Ռոզենբերգի՝ անձնային ինքնագնահատականի չափման սանդղակը (Self-Esteem Scale [9])՝ բաղկացած 10 հարցից ընդհանուր դրական ինքնագնահատականի չափման համար, միջանձնային ինքնագնահատականի սանդղակը (relational self-esteem [3]) և կոլեկտիվ ինքնագնահատականի սանդղակը (collective self-esteem [6])՝ միջանձնային և խմբային հարաբերությունների մակարդակում ինքնագնահատականի առանձնահատկությունների դուրս բերման համար: Մեր ընտրանքի համար ինքնագնահատականի յուրաքանչյուր տեսակի արտահայտվածությունը համապատասխանաբար այսպիսին է. $M_1=4,90$, $\sigma_1=1,054$; $M_2=6,17$, $\sigma_2=0,870$; $M_3=5,05$, $\sigma_3=0,961$:

Արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն. Պարզելու համար, թե անձնային ինչ առանձնահատկություններ են ընկած հոգեբանական իրավահավակնության հիմքում, իրականացրել ենք հիերարխիկ ռեգրեսիոն վերլուծություն: Ելնելով տեսական հիմնավորումից՝ հիերարխիկ մոդելում ընտրել ենք անկախ փոփոխականների հետևյալ հաջորդականությունը. առաջին մակարդակում՝ անձնային հինգ գծերը՝ որպես դիսպոզիցիոնալ առանձնահատկություններ, երկրորդում՝ «մութ եռյակը» որպես կոմպլեքս բնութագրեր և երրորդում՝ ինքնագնահատականի բաղադրիչները: Ռեգրեսիոն մեթոդի ընտրությունը հիմնավորելու նպատակով նախապես ստուգել ենք փոփոխականների բազմափոխկապվածության (multicollinearity) ցուցանիշը²⁷. վերջինիս բացակայությունը թույլ է տվել հաշվի առնել ռեգրեսիոն վերլուծության արդյունքները:

Ռեգրեսիոն մոդելն ունի 40,4% ($p=0.000\dots$) բացատրական նշանակություն. այսինքն՝ դիտարկվող անկախ փոփոխականներն այս չափով են պայմանավորում հոգեբանական իրավահավակնության դիսպերսիոն փոփոխայնությունը:

Վիճակագրորեն նշանակալից են հոգեբանական իրավահավակնության հետ անձնային հետևյալ առանձնահատկությունների փոխկապվածությունները. անձնային ինքնագնահատական ($\beta=6,229^{****}$ $p=0.000\dots$), նարցիսիզմ ($\beta=4,791^{****}$; $p=0.000\dots$), լայնախոհություն ($\beta=2,829^{**}$; $p=0.005$), մաքիավելիզմ ($\beta=2,393^*$; $p=0.017$), նեյրոտիզմ ($\beta=2,169^*$; $p=0.031$): Կարելի է նկատել, որ անձնային ինքնագնահատականն ամենաուժեղ փոխկապվածությունն ունի հոգեբանական իրավահավակնության հետ, այնուհետև նարցիսիզմի անձնային գիծը: Քանի որ հոգեբանական իրավահավակնությունը ավելիին արժանի լինելու զգացումն է, ըստ է-

²⁷ Փոփոխականների բազմափոխկապվածության ստուգման համար որպես չափորոշիչ ընդունել ենք ինֆլացիայի փոփոխայնության գործոնը (VIF-variance inflation factor), որի արժեքը բոլոր անկախ փոփոխականների համար վիճակագրորեն թույլատրելի միջակայքում է ($>1 <10$):

ության բարձր ինքնագնահատականն է, որ կարող է հիմք հանդիսանալ վերջինիս դրսևորման համար: Սպասելի էր նաև նարցիսիզմի պայմանավորող նշանակության դուրս բերումը՝ հաշվի առնելով, որ այս հենց անձնային գծին է բնորոշ անընդհատ ուշադրության և հատուկ վերաբերմունքի արժանանալու պահանջմունքը:

Վերլուծությունն ամբողջացնելու նպատակով՝ փորձել ենք պարզել, արդյո՞ք կան հոգեբանական իրավահավակնության հիմքում ընկած անձնային առանձնահատկությունների սեռային տարբերություններ: Այս դեպքում, հիերարխիկ ռեգրեսիոն մեթոդը կիրառել ենք իգական և արական սեռի ընտրանքների համար առանձին-առանձին՝ անկախ փոփոխականների՝ վերը նշված հաջորդականությամբ: Իգական սեռի դեպքում՝ ռեգրեսիոն մոդելի բացատրական նշանակությունը կազմում է 40% ($p=0.00003$), ընդ որում նշանակալից են նարցիսիզմի ($\beta=4,398^{***}$; $p=0.000022$), մաքիավելիզմի ($\beta=2,609^{**}$; $p=0.010$), անձնային ինքնագնահատականի ($\beta=4,793^{***}$; $p=0.000\dots$), հետ հոգեբանական իրավահավակնության փոխկապվածությունները: Արական սեռի դեպքում՝ ռեգրեսիոն մոդելի նշանակությունը 40,9% է ($p=0,001$), նշանակալից են անձնային ինքնագնահատականի ($\beta=3,889^{**}$; $p=0.00019$) և լայնախոհության ($\beta=3,294^{**}$; $p=0.0014$) հետ փոխկապվածությունները:

Կարելի է տեսնել, որ երկու դեպքում էլ անձնային ինքնագնահատականն ունի պայմանավորող նշանակություն հոգեբանական իրավահավակնության համար, սակայն մյուս անձնային առանձնահատկությունների համար դուրս են բերվել սեռային տարբերություններ. հետաքրքրական է, որ արական սեռի համար լայնախոհությունն է պայմանավորող, իսկ իգական սեռի համար՝ անձնային բացասական գծերը: Լայնախոհությունը կարելի է բնութագրել որպես ազատություն մտքերում, դատողություններում, աշխարհաճանաչողության մեջ, իսկ ազատությունը ճանաչողության մեջ մարդուն տալիս է ինքն իրեն արժևորելու, ինքնավստահության զգացում, հետևաբար տրամաբանական է այս անձնային գծի և իրավահավակնության հարաբերությունը:

Ըստ էության, կանայք ցույց տալու համար, որ իրենք արժանի են ինչ-որ բանի, պետք է դրսևորեն հասարակության մեջ բացասական համարվող գծեր, տղամարդկանց դեպքում՝ իրավահավակնությունն ընդունելի, օրինաչափ վարք է հասարակության կողմից: Կարծում ենք, այս արդյունքը հետաքրքրական է հետագա ուսումնասիրությունների համար. պարզելու՝ արդյո՞ք, սեռային այս տարբերությունները մշակութային կոնտեքստով են առաջադրված՝ հաշվի առնելով երկու սեռերի սոցիալիզացիայի առանձնահատկությունները:

Այսպիսով, հոդվածի շրջանակներում մենք փորձեցինք ընդլայնել հոգեբանական իրավահավակնության՝ որպես բազմաչափ կոնստրուկտի հասկացումն անձնային առանձնահատկությունների տեսանկյունից՝ ցույց տալով դրանց պայմանավորող նշանակությունը: Հատկանշական են այդ պայմանավորող հարաբերության սեռային տարբերությունների դուրս բերումն, ինչը կարող է հետագա՝ առավել խորքային ուսումնասիրության հիմք հանդիսանալ:

Գրականություն

1. **Дериш Ф.В.** Симптомокомплекс «Темная Триада» во взаимосвязи с базовыми свойствами личности // Вестник ПГГПУ Серия № 1, Психологические и педагогические науки, 2015, с.18-27.
2. **Campbell K.W., Bonacci A.M.** et al. Psychological Entitlement: Interpersonal Consequences and Validation of a Self-Report Measure // Journal of Personality Assessment, 83(1), 2010, pp. 29-45.
3. **Du H., King R.B., Chi P.** The development and validation of the Relational Self-Esteem Scale // Scandinavian Journal of Psychology, 53, 2012, pp. 258-264.
4. **Jakobwitz S., Egan V.** The dark triad and normal personality traits // Personality and Individual Differences 40, 2006, pp. 331-339.
5. **Lang** et al. Short assessment of the Big Five: robust across survey methods except telephone interviewing // Behavior Research Methods 43(2), 2011, pp. 548-567.
6. **Luhtanen R. Crocker J.** A Collective Self-Esteem Scale: Self-Evaluation of one's Social Identity // Personality and Social Psychology Bulletin, 1992, pp. 302-318.
7. **Paulhus D.L., Williams K.M.** The Dark Triad of personality: Narcissism, Machiavellianism, and psychopathy // Brief report / Journal of Research in Personality 36, 2002, pp. 556-563.
8. **Pryor L.R., Miller J.D., Gaughan E.T.** A Comparison of the Psychological Entitlement Scale and the Narcissistic Personality Inventory's Entitlement Scale: Relations with General Personality Traits and Personality Disorders // Journal of Personality Assessment, 90(5), 2008, pp. 517-520.
9. **Rosenberg, M.** Society and the adolescent self-image. Princeton, NJ: Princeton University Press, 1965.
10. **Żemojtel-Piotrowska, M.A., Piotrowski, J.P.,** et al. Measurement of Psychological Entitlement in 28 Countries // European Journal of Psychological Assessment, 2015, pp. 2-13.

ОТНОШЕНИЕ МЕЖДУ ПСИХОЛОГИЧЕСКИМ ПРАВОПРИТЯЗАНИЕМ И ЛИЧНОСТНЫМИ ХАРАКТЕРИСТИКАМИ

Григорян А. К. (ЕГУ, Ереван, Армения)

В статье рассматривается обусловленность психологической правопритязания с личностными характеристиками и самооценкой. В качестве таких, мы рассмотрели “Большую пятерку”, “Темную Триаду”, личностную самооценку, самооценку отношений и коллективную самооценку. В результате анализа выяснилось, что для психологического правопритязания наиболее значимым

предиктором является личностная самооценка, за которым следуют нарциссизм, макиавеллизм, открытость опыту и нейротизм. Результаты исследования позволяют расширить понимание психологической правопритязания с точки зрения личностных характеристик.

Ключевые слова: *психологическое правопритязание, личностные черты, самооценка, Нарциссизм, Макиавеллизм, Психопатия.*

THE RELATIONSHIP BETWEEN PSYCHOLOGICAL ENTITLEMENT AND PERSONALITY CHARACTERISTICS

Grigoryan A. K. (YSU, Erevan, Armenia)

The article discusses conditional relationship between psychological entitlement and personality characteristics. We have considered the Big five personality traits; “Dark Triad”, personal self-esteem, relational self-esteem and collective self-esteem as personality characteristics. As a result of the analysis, it has been found out that personal self-esteem has the most predictive value for psychological entitlement, followed by the Narcissism, Machiavellianism, Openness and Neuroticism.

Keywords: *psychological entitlement, personality traits, self-esteem, narcissism, machiavellianism, psychopathy.*